

«ԱԼՖԱՍԵԲՅՈՒՐԻԹԻՉ»

Սահմանափակ Պատասխանատվության Ընկերության

2019թ. տարեկան ֆինանսական վերլուծություն

2019 թ. Ընկերության ռազմավարությունը նպատակաուղղված է եղել այնպիսի միջնաժամկետ նպատակների իրականացմանը, ինչպիսիք են Ընկերության ֆինանսական ցուցանիշների կայունության ապահովումը, ներդրումային շուկայում գործունեություն իրականացնող ընկերությունների շարքում մրցունակ լինելը, Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի և Ն1 տնտեսական նորմատիվի ապահովումը, հաճախորդների կայուն սեզմենտի ապահովումը: ՀՀ ֆինանսական ցուցանիշները 2019 թվականի ընթացքում շարունակել են դրական ազդեցություն թողել Ընկերության գործունեության արդյունքների վրա:

2019 թվականի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված վերաֆինանսավորման տոկոսադրույքը նվազել է 0.25%-ով և տարեվերջին կազմել է՝ 5.5%, հետևաբար ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոյի և բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքները նույնպես նվազել են՝ կազմելով տարեվերջին համապատասխանաբար 7.0% և՝ 4.0%:

Բորսայական և արտաբորսայական առևտրի շրջանակներում կատարված գործարքների եկամտաբերության տոկոսադրույքները 2019թ.-ի ընթացքում նույնպես նվազել են, ինչի արդյունքում նվազել են նաև ՀՀ ԿԲ կողմից տրամադրվող պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորերը: Կորի նվազումն ազդեցություն է ունեցել կնքվող ռեպո գործարքների համար նախատեսված արժեթղթերի գնահատման վրա, իսկ ինչ վերաբերում է ռեպո գործարքների տոկոսադրույքին, ապա այն տարվա ընթացքում նվազել է 6.5-ից 6.0%, ինչի արդյունքում նվազել են Ընկերության տոկոսային ծախսերը և անել է զուտ տոկոսային եկամուտը:

2019 թվականին Ընկերությունը շարունակել է ակտիվ համագործակցել ֆիզիկական և իրավաբանական անձ ներդրողների հետ հիմնական և ոչ հիմնական ծառայությունների շրջանակներում:

Արժեթղթերի շուկայում գործունեության տասնութ տարվա շարունակական փորձը, գործնական կապերը, աշխատակիցների հմտությունը և իրազեկությունը թույլ են տվել ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակում ժամանակին իրականացված գործողությունների արդյունքում ապահովել Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը:

Ամփոփելով Ընկերության հաշվետու տարվա գործունեության արդյունքները՝ կարող ենք արձանագրել, որ Ընկերությունը կատարել է նախորդ տարվա գործարար ծրագրով նախատեսված ցուցանիշները՝ հիմնականում 10% շեղումների միջակայքում:

Ընկերության կառավարման մարմինը դրական է գնահատում աշխատակիցների կողմից կատարված աշխատանքները և նախատեսում է 2020 թվականի ընթացքում շարունակել ակտիվ աշխատել արժեթղթերի շուկայում՝ ներգրավելով պահի դրությամբ բանկային համակարգում գոյություն ունեցող ազատ ռեսուրսները և տեղաբաշխելով դրանք հիմնականում պետական պարտատոմսերում:

Նախատեսված խնդիրների կատարողականը գնահատվում է հետևյալ կերպ.

ա) ներդրումային ընկերության կապիտալիզացումը.

Ընկերությունն իր առջև նպատակ էր դրել ավելացնել ընդհանուր կապիտալը՝ 2019թ.-ի վերջին հասցնելով 897.1 մլն դրամի: Ընկերության ընդհանուր կապիտալը նախորդ տարվա 706,4 մլն դրամի համեմատ ավելացել է 276.0 մլն-ով և տարեվերջի դրությամբ կազմել 982.4 մլն դրամ՝ 85.3 մլն դրամով գերազանցելով գործարար ծրագրով նախատեսված ցուցանիշը: Ընդհանուր կապիտալի կտրուկ աճը հիմնականում պայմանավորված է արժեթղթերի վաճառքից ստացված եկամուտով: Կանոնադրական կապիտալը և գլխավոր պահուստը մնացել են անփոփոխ՝ կազմելով համապատասխանաբար 250.0 մլն դրամ և 37.5 մլն դրամ:



2019թ.-ի համար Ընկերության հիմնական խնդիրներից էր նաև ավելացնել ընդհանուր ակտիվների ծավալը հասցնելով 10,1 մլդ դրամի: Նախորդ տարվա համեմատ 2019թ.-ի ընթացքում Ընկերությունն ավելացրել է ընդհանուր ակտիվների ծավալը 290.4 մլն դրամով: Ընկերությունը կատարել է իր առջև դրված նպատակը 99%-ով և 2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր ակտիվները կազմել են 10 մլդ դրամ, որից 2 մլդ դրամը կազմում են հաճախորդների նկատմամբ պահանջները:

Ինչ վերաբերում է Ընկերության ընդհանուր պարտավորություններին, ապա 2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր պարտավորությունները կազմել են 9 մլդ դրամ՝ նախատեսված 9.2 մլդ դրամի փոխարեն:

2019 թվականի գործունեության ընթացքում ընդհանուր կապիտալի, ընդհանուր պարտավորությունների և ընդհանուր ակտիվների տարրերի կառուցվածքային փոփոխություններ չեն կատարվել: Ընդհանուր կապիտալի և ընդհանուր պարտավորությունների հարաբերակցության մակարդակը 2019 թվականի ընթացքում կազմել է 10.8%, իսկ ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության մակարդակը՝ 9.8%:


Ընկերության արդյունավետ գործունեությանը նպաստել են ՀՀ պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության տոկոսադրույքների իջեցումը: Բորսայական և արտաբորսայական առևտրի շրջանակներում կատարված գործարքների եկամտաբերության տոկոսադրույքները 2019թ.-ի ընթացքում նույնպես նվազել են:

Ստորև ներկայացնենք 2018թ.-ից 2019թ. շուկայում տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերության տոկոսադրույքի նվազումը:




բ) ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունները.

«Ք ֆինանսական ցուցանիշները 2019թ.-ի ընթացքում շարունակել են դրական ազդեցություն թողնել Ընկերության գործունեության արդյունքների վրա: Ներկայացնենք, թե տարեվերջին ինչ պարտատոմսեր են եղել շրջանառության մեջ և դրանցից որոնք են համարել Ընկերության պետական պարտատոմսերի պորտֆելի կառուցվածքը:



Թողարկման համար	Շրջանառության ծավալ	Ընկերության պորտֆելի պետական պարտատոմսեր	Փաթեթի կառավարման շրջանակներում պետական պարտատոմսեր	Ընկերության պորտֆելի պետական պարտատոմսերի մասնաբաժինը շրջանառության ծավալում
AMGB30163472	125,700,405,000	660,000,000	1,447,000,000	1.68%
AMGB2029A366	80,000,000,000	1,494,041,000	542,000,000	2.55%
AMBG1029A292	48,826,002,000	32,000,000	150,000,000	0.37%
AMGB1029A250	39,574,200,000	940,283,000		2.38%
AMGB1029A235	13,625,000,000	968,267,000		7.11%
AMGB20172327	36,500,000,000	700,000,000		1.92%
AMGB10172212	18,257,000,000	991,000,000		5.43%
AMGB1029A276	50,420,000,000	290,000,000		0.58%
AMGN60294227	48,199,400,000	220,000,000		0.46%
Ընդամենը	461,102,007,000	6,295,591,000	2,139,000,000	1.83%

Կարելի է նկատել, որ 2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պորտֆելում գերակշռում են երկարաժամկետ պարտատոմսերը՝ հետևյալ հարաբերակցությամբ:



Այս հարաբերակցությունը պայմանավորված է Ընկերության երկարաժամկետ նպատակներով: Ընկերության 18 տարվա աշխատանքային գործունեության ընթացքում ապահովված ընդհանուր կապիտալի աճը, ինչպես նաև տարիների փորձն

ու գիտելիքները, ընթացքում անընդմեջ կատարվող շուկայի վերլուծությունները թույլ են տալիս մանրեղ ֆինանսական շուկայում և Ընկերության արժեթղթերի պորտֆելը երկարաժամկետ պարտատոմսերով համալրելը դառնում է իրատեսական, ոչ միայն ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների տեսքով պահելու, այլև այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների տեսքով, առաջիկա տարիներին վաճառելու և լրացուցիչ եկամուտ ստանալու համար: Ընկերության պորտֆելը արդիականացնելու և երկարաժամկետ պարտատոմսերով համալրելու գործընթացը կարգավորելու նպատակով 2019թ.-ի սկզբին Ընկերությունն իր առջև նպատակ դրեց վաճառել 2020-2021թ.-ին մարվող պարտատոմսերը: Արդեն առաջին կիսամյակի ընթացքում Ընկերությունը երկրորդային շուկայում հաջողությամբ վաճառել էր վերոնշյալ պարտատոմսերի ամբողջ ծավալը՝ 2,173.3 մլրդ: Արդյունքում Ընկերությունը 2019թ.-ի ընթացքում արժեթղթերի վաճառքից ստացված գուտ եկամուտը կազմել է 218,7 մլն դրամ:


Փոխարենը՝ 2019թ.-ի ընթացքում պորտֆելի արդիականացման նպատակով Ընկերությունն ավելացրել է 10-30 տարեկան երկարաժամկետ պետական պարտատոմսերի ծավալը: 2019թ.-ի տարեվերջի դրությամբ երկարաժամկետ պարտատոմսերի ծավալը նախորդ տարվա համեմատ ավելացել է 1,616 մլրդ-ով: Ընկերությունը մտադիր է շարունակել պորտֆելի արդիականացման գործընթացը և 2020թ. մասնակցել երկարաժամկետ և միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի հերթական տեղաբաշխումներին:

Ընկերության պորտֆելի դիվերսիֆիկացիա ապահովելու, ինչպես նաև ֆինանսական կազմակերպություններին աջակցելու նպատակով 2019թ.-ի ընթացքում Ընկերությունը շարունակել է ներդրումներ իրականացնել նաև առաջատար ընկերությունների կողմից թողարկված կորպորատիվ արժեթղթերում: Նախորդ տարվա համեմատ կորպորատիվ պարտատոմսերի պորտֆելի անը կազմել է 70% տոկոս և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կորպորատիվ արժեթղթերի պորտֆելը ունեցել է հետևյալ կառուցվածքը.


(Հազար դրամ)

	Դրամային պարտատոմսեր	Դոլարային պարտատոմսեր	Ընդամենը
«Գլոբալ Կրեդիտ»	10,091	40,082	50,173
«Ինեկորբանկ» ՓԲԸ		14,148	14,148
«Կոնվերսբանկ» ՓԲԸ		31,529	31,529
«Արարատբանկ» ՓԲԸ		24,442	24,442
Ընդամենը	10,091	110,201	120,292

Իր գործունեությունն ապահովելու նպատակով Ընկերությունը միջոցները ներգրավել է ՀՀ գործընկեր բանկերից մի քանիսի հետ ռեպո համաձայնագրերի միջոցով: Ընդլայնելով իր գործընկերների շրջապատը՝ 2019թ.-ի երկրորդ կիսամյակում Ընկերությունը վերսկսել է համագործակցությունը «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի հետ: Ստորև ներկայացված է, թե դեկտեմբերի ընթացքում ինչ ծավալի ռեպո գործարքներ են իրականացվել բանկերից յուրաքանչյուրի հետ:



Ընկերությունը 2019 թվականի ընթացքում միջին օրական կտրվածքով ունեցել է 1.082 մլդ ՀՀ դրամի ռեպո գործարքներ, որի համար միջին օրական հաշվարկով հաշվեգրվել է 2,8 մլն դրամի տոկոսագումար: Դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունեցել է 8,077 մլդ դրամի ռեպո գործարքներ՝ միջինը 6,0092% տարեկան եկամտաբերությամբ, ինչը 0,1 տոկոսային կետով ցածր է շուկայում առկա միջին կշռված տոկոսադրույքից: Ընկերության արդյունավետ աշխատանքի շնորհիվ ողջ տարվա ընթացքում Ընկերության կողմից կնքված ռեպո գործարքների միջին տոկոսադրույքը շարունակել է ցածր լինել շուկայական միջին կշռված տոկոսադրույքից, ինչը նպաստել է Ընկերության տոկոսային ծախսերի կրճատմանը: Ռեպո համաձայնագրերի դիմաց վճարված տոկոսները 2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 499,3 մլն դրամ, ինչը 34,5 մլն-ով պակաս է նախորդ տարվա նույն ցուցանիշից:




Ընկերության ներդրողների զգալի մասը շարունակել է համագործակցությունն արժեթղթերի փաթեթի հավատարմագրային կառավարման շրջանակներում:

2019թ.-ին Ընկերությունն ակտիվորեն ընդլայնել է արժեթղթերի կառավարման շրջանակներում իրականացվող ծառայությունների ծավալը, որն ընդգրկվում է


Ընկերության արտահաշվեկշռում: 2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեթղթերի փաթեթի ծավալը ՊՊ անվանական արժեքով կազմել է 2,139 մլդ դրամ՝ 2,709 մլդ դրամ գնահատված արժեքով:

Ներդրողների անունից գործող արժեթղթերի փաթեթի կառավարիչը ներդրողների միջոցները ներդրել է պետական պարտատոմսերում, ինչի համար անհրաժեշտ լրացուցիչ միջոցները ներգրավել է ՀՀ ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերի միջոցով: 2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեթղթերի փաթեթի կառավարիչը ունեցել է հետևյալ ծավալի ռեպո գործարքներ.




Այսպիսով՝ 2019թ.-ի ընթացքում Ընկերության արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակներում մատուցած ծառայություններն ապահովել են 31,6 մլն դրամ եկամուտ:

Բացի այս՝ Ընկերությունը շարունակել է համագործակցել իր ռեզիդենտ ներդրողների հետ դիլերային գործառնությունների շրջանակներում և դեկտեմբերի 31-ի դրությամբ ունեցել է 2,037 մլն դրամի հակադարձ ռեպո պայմանագրեր՝ միջինը 6,3500% տարեկան եկամտաբերությամբ: Ինչի արդյունքում՝ 2019թ.-ի տարեվերջի դրությամբ հակադարձ ռեպո համաձայնագրերից ստացված տոկոսներն Ընկերության համար ապահովել են 112,8 մլն դրամ եկամուտ:




Բացի ռեպո համաձայնագրերի շրջանակներում որպես ապահովման միջոց օգտագործված արժեթղթերից Ընկերությունն իր հաշիվներին ունի նաև ազատ արժեթղթեր, որոնք սեփականության իրավունքով պատկանում են Ընկերության ներդրողներին:



գ) Ընկերության շահութաբերությունը, եկամուտները և ծախսերը.

Ընկերության եկամուտների կառուցվածքի մեջ զգալի մաս են կազմում ՀՀ պետական արժեթղթերից ստացված տոկոսային եկամուտները, որոնք 2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 802 մլն դրամ՝ 100 մլն-ով գերազանցելով

նախորդ տարվա նույն ցուցանիշը: Հարկ է նշել, որ Ընկերության ՊՊ պորտֆելի 81%-ը դասակարգվել է որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, իսկ 19%-ը՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվներ: Ամորտիզացված արժեքով չափվող ակտիվների շուկայական արժեքը 31.12.19-ի դրությամբ կազմում է 6,371 մլրդ դրամ, ինչը 889 մլն դրամով գերազանցում է դրանց հաշվեկշռային արժեքը, ինչը հետևանք է նախորդ տարիներին ձեռք բերված բարձր եկամտաբերությամբ պարտատոմսերի: Ընկերության ՀՀ պետական պարտատոմսերի պորտֆելի այս կառուցվածքը թույլ է տալիս ունենալ կայուն եկամուտ և գերծ մնալ շուկայական տոկոսադրույքների տատանումներից առաջացած վնասից:



Այսպիսով՝ 2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր տոկոսային եկամուտը կազմել է 923 մլն դրամ՝ ապահովելով գործարար ծրագրով նախատեսվածի (975 մլն դրամ) 95%-ը: Նվազումը պայմանավորված է նրանով, որ նոր թողարկված պարտատոմսերի արժեկտրոնային տարեկան տոկոսադրույքներն իջել են:

Ինչ վերաբերում է տոկոսային ծախսերին, ապա Ընկերությունը նախատեսել էր ունենալ 545 մլն դրամի ծախս, իսկ փաստացի տոկոսային ծախսը 2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 501 մլն դրամ: Արդյունքում՝ 2019թ.-ի տարեվերջին զուտ տոկոսային եկամուտը կազմել է 421 մլն դրամ՝ ապահովելով գործարար ծրագրով նախատեսվածի 98%-ը: Չուտ տոկոսային եկամուտ նախորդ տարվա համեմատ ավելացել է 26,5 մլն դրամով, ինչը պայմանավորված է եղել նրանով, որ տոկոսային եկամուտները նախորդ տարվա համեմատ նվազել են 1%-ով, իսկ տոկոսային ծախսերը՝ 6%-ով:

			(հազար դրամ)
	31.12.18	31.12.19	2019թ. կանխ.

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	931,031	922,972	975,000
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	536,132	501,582	545,000
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	394,899	421,390	430,000
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	10,219	31,499	11,200
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	34,530	220,545	40,000
Գործառնական եկամուտներ	437,279	672,859	481,200
Շահույթ/վնաս մինչև հարկումը	247,400	450,807	275,200
Ժամանակահատվածի շահույթ/վնաս	197,894	361,088	220,160

Հետևյալ համեմատությունից կարելի է նկատել, որ չնախատեսված ան են ունեցել գործառնական եկամուտները, որոնք բաղկացած են զուտ տոկոսային եկամուտներից, ստացված կոմիսիոն ու այլ վճարներից և զուտ առևտրային գործունեությունից ստացված եկամուտից: Վերջիններից երկուսն աննախադեպ ան են ունեցել: Կոմիսիոն վճարներն առաջացել են Ընկերության փաթեթի կառավարման շրջանակներում մատուցած ծառայություններից, որոնք ապահովել են 31,6 մլն դրամ եկամուտ՝ նախատեսված 11,2 մլն-ի փոխարեն: Իսկ զուտ առևտրային գործառնություններից ձևավորված եկամուտը, որը նախատեսվածից գերազանցել է հինգ անգամ և կազմել 220,5 մլն դրամ, պայմանավորված է այն հանգամանքով, որ Ընկերությունը տարեկարգին որոշում էր կայացրել վաճառել իր 2020-2021թ.-ին մարվող պարտատոմսերը՝ լրացուցիչ եկամուտ ապահովելու նպատակով:

Այսպիսով, 2019թ.-ի ֆինանսական շուկայում ստեղծված բարենպաստ իրավիճակը թույլ է տվել, որ Ընկերությունն արդյունավետ կերպով կատարի իր առջև դրած նպատակները և ժամանակաշրջանի շահույթը կազմի 361,1 մլն դրամ: Հաշվի առնելով, որ Ընկերությունը գործարար ծրագրով նախատեսել էր ունենալ 220,1 մլն շահույթ, կարելի է ասել, որ Ընկերությունը գերակատարել է իր կանխատեսումները 64%-ով:

դ) հաճախորդների քանակը, վերջիններիս փոփոխության դինամիկան.

2019 թվականին Ընկերությունը շարունակել է համագործակցել ֆիզիկական և իրավաբանական անձ ներդրողների հետ, որոնց հետ կնքվել են ՀՀ պետական պարտատոմսերի առք ու վաճառքի պայմանագրեր և հակադարձ ռեպո գործարքներ: 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ռեզիդենտ ներդրողների հետ ունեցել է հակադարձ ռեպո պայմանագրեր (2.036 մլդ դրամի՝ 1.714 մլդ դրամ անվանական արժեքով): Փոխառության տրված արժեթղթերի ծավալը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 24 մլն դրամ: Ինչ վերաբերում է պահառությանը, ապա 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պահառության հանձնված արժեթղթերի անվանական արժեքը կազմել է 275 մլն դրամ : Եվ ներդրողների զգալի հատվածը միջոցները վստահել է արժեթղթերի փաթեթի կառավարմանը, ինչի արդյունքում դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության արժեթղթերի փաթեթի կառավարման պորտֆելը կազմել է 2.709 մլդ դրամ:

Ներկայացնենք նաև 2019 թվականի չորրորդ եռամսյակի արդյունքում բոլոր ներդրումային ընկերությունների՝ հաճախորդների նկատմամբ պահանջների ծավալների համեմատությունը, որից հստակ երևում է, որ Ընկերությունը շարունակում է մնալ հաճախորդների սպասարկման ոլորտում առաջատարներից և գրավել շուկայի 45%-ից ավելին:

Ներդրումային ընկերությունների՝ հաճախորդների նկատմամբ պահանջները



ե) կադրային քաղաքականություն.

Ընկերությունն իր կադրային քաղաքականությունը կառուցում է երկարաժամկետ համագործակցության, աշխատակիցների նկատմամբ խրախուսման սկզբունքների հիման վրա: 2019 թվականի ընթացքում Ընկերությունն ավելացրել է աշխատակիցների քանակը՝ ընթացիկ գործունեությունն ավելի արդյունավետ, արագ և որակյալ կազմակերպելու համար:

2019 թվականի ընթացքում գործունեության ծավալների ընդլայնման արդյունքում Ընկերությունն իր կադրային ներուժը համարել է ՏՏ և Ծ բաժնի մասնագետով՝ աշխատակիցների հետ տեղեկատվական և հեռահաղորդակցման համակարգերի անվտանգության ապահովման նպատակով:

Ընկերությունը մշտապես ուշադրություն է դարձնում սեփական կադրերի պատրաստման և վերապատրաստման աշխատանքներին, որը թույլ է տալիս աշխատակիցներին յուրացնել փոփոխվող օրենսդրական դաշտը, ուսումնասիրել գործընկերների հետ համագործակցության ուղիները, ներդրվող և մշակվող տեխնոլոգիաները և այլն: Ընկերությունը խրախուսում է նաև աշխատակիցների մասնագիտական որակավորումը և ձգտում է նրան, որ բոլոր աշխատակիցներն ունենան համապատասխան որակավորում: 2019թ. մի քանի աշխատակիցներ ստացել են նաև լրացուցիչ մասնագիտական որակավորումներ՝ աշխատանքների փոխարինելիությունն ու անընդհատությունն ապահովելու նպատակով:

Նշենք, որ Ընկերության գործունեության հետ առնչվող բոլոր աշխատակիցներն ունեն բարձրագույն կրթություն, աշխատակիցների մեծամասնությունն ունի համապատասխան բարձր որակավորում և արժեթղթերի ոլորտում աշխատելու բազմամյա փորձ:

Ընկերության աշխատակիցները 2019 թվականի ընթացքում մասնակցել են տարբեր մասնագիտական որակավորման դասընթացների, բարեհաջող հանձնել են

քննություններ և ստացել որակավորման վկայականներ, ինչն էլ վկայում է, որ Ընկերությունը շահագրգռված է լավագույն կադրեր պատրաստելու հարցում:

գ) նորամուծություններ.

Ընկերությունը 2019թ ընթացքում միջոցառումներ է ձեռնարկել ուսումնասիրելու Ռուսական արժեթղթերի շուկաները, որը կարող է հետագայում արժեթղթերի շուկայում և ավելի գրավիչ դարձնել Ընկերության կողմից առաջարկվող ծառայությունների շրջանակը: Ընկերությունը Ռուսաստանի արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցներից ստացել է գործնական առաջարկ՝ բացելու հաշվիներ և համագործակցել:

Ընկերությունը 2019թ ընթացքում լիարժեք օգտագործել է Հաշվապահական հաշվառման Հայկական ծրագրերը, հատուկ բանաձևերի կիրառման արդյունքում հեշտությանը արտահանել է ՀՀ կենտրոնական բանկ հաշվետվությունների համար անհրաժեշտ տեղեկությունները: Պետական արժեթղթերով իրականացվող գործարքների արագ և որակով կատարման համար Ընկերությունը գործարքներն իրականացնում է CBANET համակարգի միջոցով:

է) մարկետինգային քաղաքականություն.

Ընկերության մարկետինգային քաղաքականությունը 2019 թվականին ուղղված է եղել պետական պարտատոմսերում ներդրումների ոլորտում կայուն դիրքերի գրավմանը, գործընկերների հետ փոխշահավետ համագործակցության ապահովմանը, ինչը նպաստել է հաճախորդների կայուն սեզմենտի ներգրավմանը:

Արժեթղթերի շուկայում գործունեության տասնութ տարվա շարունակական փորձը, գործնական կապերը, աշխատակիցների հմտությունը և իրագելությունը թույլ են տվել ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակում ժամանակին իրականացված գործողությունների արդյունքում ապահովել Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը:

Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Գ.Գրիգորյան

Կ.Սիմոնյան